

## Ս. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՆԱԾԱԿՆԵՐ

Պատուական Հայրենակից

Սիրելի եղբայր ի Քրիստոս

Գրիգոր Սալտիքեանց

Ձեր նամակը անցեալ Ապրիլի 11 թուականից ստացալ  
և շատ ուրախացալ տեղեկանալով ձեր ողջ և առողջ հասանելուն  
Նախիջևան. շատ անհանգիստ մտածմունքի մէջ էի ալդ մա-  
սին, մանաւանդ ձեր ամուսնու և մեր բարի քուեր վշտակրու  
թեանը միտ դնելով ճանապարհի վերալ. Քաղցր է ինձ միշտ  
մօտուց և հեռուից հաղորդակից լինել իմ բարեկամների  
ու ծանօթների հետ. բաց ի սորա մասնաւոր խորհրդից, կալ  
և ընդհանուրը. ալլապէս կարելի չէ օգնել մեռածին. մեզ պի-  
տոյ է սիրել իրեար նախ և լաւաջ որպէս մարդ իւր հաւատա-  
րակից մարդը, որպէս քրիստոնեալ իւր քրիստոնեալ եղբայրը  
և ապա որպէս Հայր իւր ազգակից Հայր. եւ սիրելը ինչպէս  
կը լինի ալդ պիտոյ է միշտ գործով բացալալովի, պատճառը  
սէրը լեզու չունի, և խօսքով սիրու մեծ պատուիրանքը լցու-  
ցաւել անկարելի է, սուտ բան է. Ուրեմն հարկաւոր չէ ձեզ  
ծուլանալ գրել ինձ, ինչքան կարելի է լաճախ. և ինչպէս կա-  
րող ենք մեք ասել միմեանց բարեկամ, եթէ չը կամինք ա-  
մեն մի յարաթ, ամեն մի ամիս մի քանի ժամ մեր կեանքից,  
մեր ժամանակից, մեր մտածմունքից նուիրել, ընծալել մեր  
բարեկամին, մեր սրտի խօսակցութեանը մեր սիրականների  
հետ. կարծեմ և Հալոց սիրտը մարդկեղէն սիրտ է. ուրեմն  
և ալդ սիրտը. պարտական է ալդպէս զգալ ինչպէս ասացի.  
Պատկանեանցի օգտի մասին աշխատում է Նալբանդեանցը.  
ցաւելի իրողութիւն. ինձ ևս մի նամակէր գրել Պատկանեան-  
ցը. բայց իմ կարծիքս այս է, որ մեծ արծաթով կարելի էր  
ստանալ լաղթութիւն, և օրինաւոր աշխատութիւն գալով ու  
գնալով հարկաւոր պարոնների մօտ. Նալբանդեանցը գրած կը  
լինի Ձեզ, կարծեմ, ալդ գործի դրութիւնը, օրին աւելի լաւ տե-  
ղեակ էր քան թէ ես. Աստուած բարին առաջնորդեսցէ.  
Հանդէս նոր հալախօսութեան գրքի 2 հատորը ծախվում  
է թէ ոչ. բան չէք գրում ինձ. Օրագրի երկրորդ ամսատետ-  
րակը ստացած կը լինիք մինչև այժմ, անպատճառ. Ներորդը

ալս օրերումս ճանապարհ կը ձգեմ, և այսպէս մին մինի քամակից կը ստանաք օրագրի ամսատետրակը: Յաւելի է ասել, որ դեռ ես կարելի չէ 5 թերթից աւելի տպել Բարձրաթի տպարանումը այսինքն հայերէն մի ամսու մէջ. բայց մեզ հարկաւոր էր գալոց ամիսների մինումը 10 թերթ, այսինքն երկու ամսատետրակը միասին դուրս արձակել, որ հաւասար վէինք ժամանակի հետ: Մի՞ծ ծախքով և լորդորանքով գալու է Մոսկվա մի հալոց գրաշար Պետերբուրգից. տեղուք, ինչ կարելի է առնել. տարու միջումը կը հրատարակվին ստորագրողների անուանքը մի փառաւոր թղթի վերայ:

Մոսկվայումը, պատրիարքի ընտրութեան մասին, այսպէս որոշեցինք, որ տանք մեր ձայնը Ղուկասի համար. և այս թուղթը ստորագրեցին այն Հայերը որ Պետերբուրգումը և Մոսկվայումս տուն ու տեղ ունեն, բայց ոչ օտարականք: Զալալեանցի գլուխը վերջապէս ջաղջախել են նոյն իսկ Թիֆլիզեցիք, ամենևին հողին հաւասարեցնելով նորան և նորա կուսակիցքը: Բայց ժամանակը կը ծնուցանէ դեռ ևս այլ բաներ: Յոյս կալ, որ Հալոց խռովութիւնքը շուտով կը հանդարտեն, և աւազակ մարդիկը կը սանձահարվին: Բայց ի հարկէ առանց լուսատրութեան և բարոյականութեան հիմք ձգելու և հատատեւելու ազդի մէջ, անպտուղ կը մնար և այդ, ապագայի համար. բայց հալոց խելքը կարճ է. դոքա հեռատեսութիւն չունեն, և աղագայի հասարակութիւնը և պատրաստել մի անօրինակ բան է դոցա հոմար, մանաւանդ որ ամեն մարդ իւր մասնաւոր օգուտն է որոնում, և ոչ ոք ընդհանուրի վերայ մտածող չը կալ. և այդպէս ի հարկէ պիտոյ է կորչի ազգը, որովհետեւ դուք գործ կատարել չը կամիք, և գործը ինքն ըստ ինքեան կատարվելու չէ:

Ողջունելով առ ի սրտէ Զեղ և ձեր քաղցր ամուսինը,

մնամ Զեղ միշտ լարգող Ս. Նազարեանց

Մոսկվա, Յուլիսի 8-ին 1859

Պատուական բարեկամ Գրիգոր Սալտիկեանց

Զեր լարդելի նամակը անցեալ Յունիսի 26 թուականից ստացալ անկորուստ և շտապում եմ լալտնել Զեղ իմ շնորհակալութիւնը, որ զրած էիք ինձ վերջապէս մի քանի բառ, ծանուցանելով ինձ ձեր գերդաստանի որպիսութիւնը: Շնորհակալ եմ և ձեր բարեկամական պարգևի համար, որ դեռ ևս ստացած չեմ: Միքալէլ Նալբանդեանցից ուրախաբեր տեղեկութիւնք ստացալ երեկ Փարիզից. դոցա կը ծանօթանաք պի Հալրապետեանցի նամակից և դործ կը կատարէք, ինչպէս խորհուրդ է տալիս Նալբանդեանցը: Միայն հարկաւոր է ձեզ

քաջալերովիւ և արաբար գործ կատարել և թողուլ դանդաղ-կոտուածիւնը: Նալբանդեանցը ալ ժամ ֆարիզ է և շուտով կը վերադառնալ դէպի Ռուսաստան, և ինչպէս երևում է, այսուհետև ոչինչ վտանգ չկալ. որովհետև կաթողիկոսը կամի պաշտպան լինել մեղ իւր հայրապետական արդարասիրութեամբ և ճշմարտաճանաչութեամբ:

Հիւսիսափայլի լեռանալու պատճառքը, որ միայն տպարանի ալժման կառավարութիւնից է լառաջանում և ոչ ինձանից, զրեւ եմ Պ. Հայրապետեանցին, որ կը կարգալ ձեզ իմ նամակը. բայց այդ ցաւքին լոյս կալ օգնելու, այսինքն արձակման տոմսակը որ պիտոյ է ամեն անգամ, տնտրակը տպելուց լետոյ, ստացվի ցենսուրեան հոմիտետից, բաւական երկար լետ է մնում Պետերբուրգի մէջ, և տպարանը ունի իրաւունք պահել իւր մօտ տպած բաները, մինչև ստացվի արձակելու տոմսակը. բայց մինչև ալ ժամ ալլապէս էր լինում, տպարանի առաջին կառավարչի մասնաւոր խոլտուութեամբը, այսինքն իսկուն տարածելու տպածները: Ահա ձեզ բանի խորհուրդը: Բայց լոյս կալ փոխելու այդ բանի կարգը:

Իմ անձնական դրութիւնս, պատճառ կալ մտածելու, որ շուտով կը փոխվի. այսինքն կամիմ ես իմ պաշտօնը Լազարեանց դպրոցի մէջ թողուլ, և մի մասնաւոր ուսումնարան (պանսիօն) բանալ Հայոց զաւակների համար Մոսկվայի մէջ: Յոյս ունիմ որ Դուք, Հայրապետեանցը և ձեր բարեկամները օգնական կը լինին իմ ձեռնարկութեան լառաջադիմութեանը, տղաք ուղարկելով ինձ. կարծեմ, այս դործը աւելի օգտակար լինի ինձ և մեր սիրելի ազգին, մասնաւոր որ ազգի որդիքը դաստիարակելուց աւելի լաւ բան չկալ, և պիտոյ է ուսման մեծութիւնը ալնքան լինի, որ աշակերտքը պատրաստվէին ուղղակի մտնելու դէպի համալսարան:

Եւ և իմ ամուսինը շատ և շատ ողջունում են Ձեզ և ձեր պատուական ամուսինը. Ձեր սանիկը օրէ (օր) անում է և զօրանում է Աստուծոյ շնորհով, և պակաս չէ սորա համար ոչինչ մարական հոգաբարձութիւն և ալն առանձին ուշադրութիւնը նորան, ինչպէս ցանկանում էք դուք:

Ձեր ողջունածքը կրկին ողջունում են ձեզ և խնդրում են Աստուծուց, որ առողջ լինիք դուք ձեր պատուական ամուսնով Ձեր ձեզ սիրող և պատուող բարեկամների համար:

Ձեր պատուականութեանը

լարգող և պատուող

պատրաստական Ս. Նազարեանց